ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՓՊՄԱՊՁԲ-2/1

Ք.Երևան 20.11.2017թ.

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական ռեզերվների գործակալությունը, ի դեմս գործակալության պետի Ժ/պ Ա.Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և <<Սթիլ Կոնցեռն>> ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ա.Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Գնորդի կողմից <<շինարարության մեջ օգտագործվող ապրանքների>> ձեռքբերման N ՀՀ ԱԻՆ ՊՌԳ-ՓՊՄԱՊՁԲ-2 ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի նախարակավորման ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացույցային օրվա ընթացքում՝ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարացնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցվում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքնային օրը: Այդ ընթացքում Վաճատողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Նույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պաատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմողտեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:

3.3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք.Երևան, Դավիթաշեն 4	ք.Հրազդան, կենտրոն 6/39
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/Հ900011001394	Հ/Հ 163158012381
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 03019924
Էլ.հասցեն՝gnumner@mil.am	
ՀՀ ԱԻՆ աշխատակազմի Պետական ռեզերվների Գործակալության պետի ժ/պ	<<Սթիլ Կոնցեռն>> ՍՊԸ-ի տնօրեն
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ